

մինչ բանասերիւն պատրանքով եւ նախա-  
մարդոյն անաստուծեամբ յառաջ եկած  
պատժական կացքը — տրամուծեամբ  
ճնդես որդի, քրտամբք երեսաց քոց կերի-  
ցես զհաց քո, հող էիր եւ ի հող դարձցիս  
— կենսական էր ու անձնական եւ շարու-  
նակ կ'այլկոծէր մտքերը՝ անհամար «ըն-  
դէր» ներու եւ «զեմրդ» ներու մղելով աս-  
տուածապատիժ աղամորդին: Հարկ անհրա-  
ժեշտ էր պատասխանել ստիպողական այս  
հարցերու: Կարելի է Ենթադրել նոյն իսկ  
անձուկ մտքով Արարածոց կամ ծննդոց  
զրոց ամբողջական մեկնութիւն, առանց մով-  
սիսեան պատմութեան Գ. եւ Գ. պրոֆեսոր-  
րու այլ մեկնութեան գոյութեան: Եւ կարե-  
ւոր այս մեկնութեան պակասը մեր խնդրոց  
նիւթ գրութեան մէջ, կարելի է լուծել  
միայն ձեռագրական կորուստ պնդելով:

(Շարունակելի:)

Հ. Ա. ՎԱՐՊԱՆՅԱՆ



**ԼՈՒՍԱՐԱՆՈՂ ՆՈՐԱԳԻՏ ՎԱՆԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՄԸ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՄԱՍԻՆ**

Անցեալ տարի Անգղիացի բանասէր մը՝  
(Sir Herman Gallancz) հրատարակեց ի  
Լոնդոն լատիներէն ինքնագիր միակ ձեռագ-  
րի վրայէն Բասորայի Կարմեղեանց հնագոյն  
տարեգրութիւնը, հանդերձ Անգղիերէն տեղ  
տեղ ո՛չ այնքան ճշգրիտ ու հարազատ  
թարգմանութեամբ: Արդ՝ նոյն գրեթէ միա-  
գարեան տարեգրութեան մէջ կը գտնուին  
բասորանակ Հայոց մասին հետաքրքրական  
ինչ ինչ տեղեկութիւններ, որոնցմէ այս ան-  
գամ միայն հետեւեալը յառաջ բերելու կը  
փութամ՝ հաւատարմութեամբ եւ լուսարանելու  
համար ինչ որ արդէն գրած էի Հանդէսիս  
մէջ 1927, էջ 333:

Յիշեալ հրատարակութեան վերնա-  
գիրն է.

Chronicle of events between the years 1623  
and 1733 relating to the settlement of Car-  
melites in Mesopotamia (Bassora).

Ասոր 85, 86 էջերու վրայ կը կարդանք  
հետագայ տողերը:


Cum illo sacerdote erat etiam unus epi-  
scopus, qui vocabatur Aones, qui etsi exte-  
rius non se gereret tam impertinenter, alios  
tamen stimulare non cessabat; cui spero  
Deus pepercerit, errores enim suos detesta-  
tus est et fidem Catholicam professus est an-  
tiquam moreretur, sicut videbimus anno se-  
quenti...

Redeamus ad supradictum Episcopum  
Armenum dominum Joannem, qui dum sa-  
nus esset satis alienum a religione Catholica  
se demonstrabat saltem exterius, interius  
enim esse Catholicum mihi pluries protesta-  
tus est, sed non posse talem se profiteri  
dicebat propter suae gentis respectum, talis  
enim respectus majus est vinculum quo solet  
diabolus allegare Armenos, paucos quippe  
ex eorum doctoribus aut literatis vidi, qui  
mihi ingenue non confessi sint, se vere nosse  
et scire puritatem fidei Christianae esse  
quam docet ecclesia Romana, sed propter  
respectum alterius ad alterum, quo diabolus  
eos stringit, pauci sunt qui tales se profiteri  
exterius audeant, et ex eorum numero fuit  
dictus dominus Aones Episcopus qui olim  
fuit patriarcha Constantinopolitanus, id est,  
pro Armenis intrusus, verus enim patriarcha  
est quem nominat, vel saltem confirmat le-  
gitimus Sancti Petri successor Pontifex Ro-  
manus.

Dictus autem Episcopus Aones suo  
patriarchatu non contentus ad Hierosolimi-  
tanum inhiebat, pro quo obtinendo multas  
in vanum fecit expensas nihil enim obtinuit,  
et cum creditoribus, a quibus pro hoc poe-  
cunias mutuo acceperat satisfacere non pos-  
set, huc se refugere coactus est, et hoc for-  
san ex divina providentia, ut saluti suae pro-  
viderat, hic enim in morbum decidit, et saepe  
saepiusque a nobis visitatus tandem fidem  
Catholicam, cum singulari devotione pro-  
fessus est die 17a Junii istius anni Domini  
1684 et cum bis in morbo confessus et com-  
municatus fuisset ingravescente morbo  
Sancta Extrema Unctione munitus animam  
Deo reddidit die decima Julii, et die sequenti  
sepultus est in coemeterio nostro dicto  
Haissa Ben Mariam.

Ի Բաղդադ, 8 Նոյ. 1928:

ՆԵՐՍԷՍ Ա. ՄԱՅՆՆԱՆ



**ՖԵԼԻՔՍ ՕՍՎԱԼԴ  
ԵՐԿՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ**

ԳԵՐՄ. ԹՐԳՄ.

ՕՏՏՈՅ ՎԻԼՔԵՆՍ

ԳԵՐՄԱՆԵՐԻՆ ԲՆԱԳՐԻՆ ՓՈԽԱԳՐՈՒՄԾ  
ՀԱՅԵՐԵՆԻ

(Շարունակելի:)

Բ.

**ԱՎՆԱՐԿ ՄԸ ԽԱՒԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԼԵՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

(Տես երկրախօսական Տախտակ 2:)

3. — Երկրախօսական խաւակարգը Հայաս-  
տանի մանաւանդ իւր արեւելեան մասին մէջ՝  
լաւ զարգացած է ու ծանօթ: Եւ արդէն  
կատարուած է մանրադիտական ուսում-  
նասիրութիւն մը բաղմաթիւ ժայթքա-  
քարերու (Eruptivgesteine, հրաբխային,  
հրածորան քարեր): Սակայն եւ այնպէս  
տակաւին ընելը չափազանց շատ բան կայ,  
որովհետեւ երկրին երկրախօսական յորի-  
նուածօրէն հետազոտութեան մը մինչեւ  
այժմ չէ ձեռնարկուած. եւ Տաւրոսի եւ  
իւր նախալեւանց, Տարսիսի եւ մինչեւ ան-  
գամ դիւրամատչելի Պոնտական երկրա-  
մասին երկրախօսական կազմութեան նկատ-  
մամբ միայն ցանցաւ տեղեկութիւններ ու-  
նինք: Ընդհանրապէս առեալ՝ կենդրոնա-  
կան բարձրաւանդակն այնպէս ծածկուած է  
նորաժամանակեայ լճադիրտերով ու հրա-  
փրփուրներով որ միջակենդանական (meso-  
zoisch) եւ հնագոյն քարեր հոն ցանցաւ-  
օրէն երեւան կու գան: Յուրա (Jura) կը  
նշանակուի միայն արեւելեան եզրալեւանց  
մէջ եւ Ուրմիոյ լճին շրջակայքը:

**ՆԱԽԱԳԻՏԻՈՆԵԱՆ ՔԱՐԵՐ**

4. — Սաստիկ ծալուած, խարխալած  
եւ թերթատուած գղձաքարեր (Gneis),  
եւ ուրիշ բիւրեղական հերձաքարեր

(Schiefer)՝ Հայաստանի հնագոյն քարերն  
են: Ասոնք՝ որչափ տեղեկութիւնները  
կը հաստատեն, կը ձգուին Հարաւարեւ-  
մուտքէն դէպ ի Հիւսիսարեւելք ուղղու-  
թեամբ: Ասոնք կը կազմեն դիմացկուն զան-  
գուածներ, որոնք յաջորդող ամէն ծալմանց  
դէմ բաւականէն աւելի արդեւելք ազդեցու-  
թիւն մը գործած են:

Հայկական Տաւրոսն այն հին զանգուած-  
ներուն կարեւորագոյնն է: Կը բաղկանայ փայ-  
լարային, քլորիտային, ճարպակային (տալկ) եւ  
կաւային հերձաքարերէ, ծալուած մարմոր-  
ներէ եւ կրահերձաքարերէ, որձաքարակներէ  
(Quarzit) եւ գղձաքարերէ, որոնց մէջ յաճախ  
կ'ընկերանան օձակձեր (Serpentin, Վանայ լճի  
հարաւային ափը<sup>2</sup>), հոմահերձաքարեր (Horn-  
blende-Schiefer «եղջերափայլ-հերձաքար»),  
եւ երբեմն նաեւ հատաքար (կամ գրանիտ)  
(Վանիկ՝ քէսերի ձորի մէջ), կամ զատաքար  
(Diorit<sup>58</sup>, ի Մուկուս եւ Շիրվան): Հերձաքա-  
րային այս զանգուածը կը տարածուի յամենայն  
դէպս Ռովանդուզէ սկսեալ դէպ ի արեւմուտք  
մինչեւ Ուզունեայլա (Ալպիտանի հիւսիսա-  
կողմը). ուր ասոնց վրայ դեռնեան քա-  
քեր<sup>95</sup> նստած են: Միեւնոյն աղերսը կը տես-  
նուի Տաւրոսի ամէնէն աւելի արեւելեան  
ծայրն ալ:

Փայլար-հերձաքարի եւ ծալուած մարմորի  
յաճախ փոխնիփոխ իրարու յաջորդելը կրնանք  
դիտել օրինակի համար Վանայ լճի վրայ գրտ-  
նուող Գատուանի քով, ուր միայն իսկ 100'  
տարածութեան վրայ հետեւեալ հատածն  
երեւան բերուած է<sup>2</sup>, այսինքն՝

1. Մութ գորշ, թերթահերձ մարմոր՝ կրա-  
սպաթի երակներով, 25'.
2. Բաց գուևով որձաքարային փայլարահեր-  
ձակ (Quarzglimmerschiefer), 20'.
3. Բաց-կանաչ, քլորիտային փայլարահեր-  
ձակ որձաքարի աչքերով, 25'.
4. Մութ գորշ, թերթահերձ մարմոր՝ կրա-  
սպաթի երակներով, 30'.

Եփրատի վրայ Կապան-Մատենի մէջ ալ  
նման հատած մը կը գտնուի<sup>92</sup>, այսինքն՝

1. Ճերմակ, շաքարահատիկի մեծութեամբ  
կամ աւելի մեծահատիկ կիր.
2. Կապոյտ, թերթահերձ կիր.
3. Փայլարահերձակ (Glimmerschiefer փայ-  
լար-հերձաքար).

4. Գլորիտ-Տերձակ (Chloritschiefer, քլորիտ-Տերձաքար).

5. Գլձաքար: Ասոր մէջ խառնուած է հատաքար, որ իւր երակները կը տարածէ նաեւ քլորիտ-Տերձաքարի մէջ:

Փայլար-Տերձաքարերն արագ օդահարելով թխագոյն աւազի կը փոխուին, որով Տաւրոսեան լեռանց գագաթները սուրբար մարմորէ կը բաղկանան, մինչդեռ անոր տակ գլուխուող փայլար-Տերձաքարերը լեռանց կողերուն վրայ երեւան կու գան աւազի թանձր ծածկուածով մը:

Այս փոխածել գօտեղյն մեծագոյն բարձրութեան կը հասնի Զէլու լեռը (5320 մետր): Այս լեռը կազմուած է Տերձաքարերէ, դոլոմիտական կրերէ եւ ծիրանեքարակներէ<sup>2</sup> (Porphyrit):

Նման երկրակազմական նշանակութեամբ հողամաս մը՝ որ սակայն նոյնչափ լաւ կերպով չէ հետազոտուած, ծայրագոյն Հիւսիսակողմը կը գտնուի Մեսիսական լեռնագօտին (կամ Զիրուլա գմբեթարը), որ կազմուած է հատաքարերով, գլձաքարերով եւ բիւրեղական Տերձաքարերով<sup>41</sup>: Հատաքարերուն կամ հատաքարերուն (Granulit) հետ յաճախ խառնուած են հոս սեւածիրանեքարեր (Melaphyr), անցիկներ (Diabas) եւ ծիրանեքարակներ: Հատաքար-գլձաքարեր, փայլար-Տերձաքարեր եւ քլորիտ-Տերձաքարեր կը գտնուին նաեւ խրամի ձորին վերնակողմը եւ Սովսէթական լեռները<sup>21</sup>, ինչպէս նաեւ հիւսիսային եզրալեռանց ուրիշ կէտերու վրայ:

Արեւելեան եզրալեռանց մէջ տեղ տեղ կը գտնուին փոքր քանակութեամբ Տերձաքարեր ու գլձաքարեր. օրինակի համար կաւա-Տերձաքար (Tonschiefer խեցեքար) եւ շաքարահատիկի նման մարմոր (որուն վրայ նստած է Տուրոնեան խաւկարգը)՝ Աղլխան լեռան վրայ<sup>14</sup>, եւ լայն գօտի մը քլորիտ-Տերձաքարերու, փայլար-Տերձաքարերու եւ որձաքարակներու՝ սպիտակ մարմորներով, օձակձով ու թերթա-Տերձ գլձաքարերով՝ Բամբակի<sup>14</sup> լեռնաշղթային մէջ եւ Գարաչիչակ (Ծաղկունեաց) լեռը<sup>1</sup>: Այն քլորիտ-Տերձաքարերն եւ համա-Տերձաքարերն (որոնց վրայ նստած է Գեւոնեան խաւկարգը), որոնք կը գտնուին Արփայի ձորը (Գարալագեազ), եւ Ողջիձորի («Օխչի», Արեւմտեան Ղարաբաղ) վերնամասին մէջ<sup>1</sup>, նորէն երեւան կու գան Երասխի հարաւակողմին ի կարողազ (Իրի, Ալեքս եւն): Հիւսիսային ու

Արեւելեան Ղարաբաղի քանի մը խորունկ ձորերուն յատակն երեւան կու գան հին գլձաքարեր ու պնդաքար-ծիրանեքարեր (Feldspatporphyr)՝ Յուրասական քարերուն միջեւ<sup>14</sup>:

Հիւսիսային եզրալեռանց Պոնտական մասէն կը նշանակուին Տերձաքարային ապառաժներ, բայց իրենց հնութեան ճշգրիտ չափը տակաւին անծանօթ է: Կաւահարձաքարեր՝ Հարաւարեւմուտքէ Հիւսիսարեւելք ձգուող ուղղութեամբ՝ զարգացած են ճորոխի ձորին վարի կողմը՝ Արգուինի քով<sup>1</sup> եւ անոր դրացի Արտանուչի ձորին մէջ: Ասոնց վրայ նստած է ներքին կաւիճի խաւկարգը<sup>28</sup>: Նման քարերու գօտի մը երեւան կու գայ Պոնտական շղթային ներքին երեսին վրայ (օրինակի համար Քաջքար լեռան արեւելակողմը), եւ Օլթիի աւազանին մէջ (կանլը-դաղ ու Աք-դաղ՝ Խոի քով<sup>52</sup>):

Փոխածել շաքար (նոյնպէս Հարաւարեւմուտքէ դէպ ի Հիւսիսարեւելք ձգուող ուղղութեամբ) տեղ տեղ երեւան կու գայ նոյն իսկ Հայկական բարձրաւանդակին ներսերը. այսպէս՝ Արաբկերի քով<sup>22</sup> (փայլար-Տերձաքար, երբեմն՝ գրաքարային): Ասի կը տարածուի Տարսիմի մէջ եւ կը բարձրանայ կղզիացեալ զանգուածներով՝ Աք-դաղ<sup>2</sup> (մարմոր՝ գրաքարային փայլար-Տերձաքարերու վրայ) մինչեւ Խնուսի հիւսիսակողմը, Շատին լեռը<sup>52</sup> եւ Կըզըլա-դաղ Վանայ լճի արեւելակողմը<sup>65</sup>:

Գ Ե Ի Ո Ն Ս

5. — Միջին եւ վերին-դեռնեան խաւեր կը նշանակուին Երասխայ աւազանին (Արարատայ հարաւ-արեւելակողմը<sup>10, 42</sup>) եւ անոր Արփա անուն օժանդակ գետոյն ձորին մէջ (Դարալագեազ<sup>63, 97</sup>), ուր՝ կարմիր, փայլարաշատ աւազաքարերու եւ քարազանգերու (Konglomerat) վրայ նստած են: Դէպ ի հարաւ կը տարածուին մինչեւ Ուրմիոյ աւազանը, եւ դէպ ի արեւելք՝ մինչեւ Կարադաղ. բայց ծանօթ չեն այն երկրամասին մէջ, որ կը տարածուի մէկ կողմանէ Արարատայ եւ միւս կողմանէ Անտիտաւրոսի այն կէտին միջեւ, ուր դարձեալ կը սկսին երեւան գալ: Երասխայ աւազանին մէջ իրենց ուղղութիւնն է մեծաւ մասամբ Հիւսիս-արեւմուտքէն դէպ ի Հարաւ-արեւ-

ելք, երբեմն (ի Դավայու, Դեղմա, Դանգա, Գիւնէշիկ<sup>10</sup>)՝ Հարաւ-արեւմուտքէ դէպ ի Հիւսիս-արեւելք, որ թերեւս մեկնելու է այն յեանորդ աղբեցութեամբ՝ զոր դործած են ներքեւը նստած Տերձաքարերու ձգուածքները: Հայկական Դեռնը կը համաձայնի Անտիտաւրոսի եւ Պարսկաստանի դեռնեան խաւերու հետ, եւ այս համակերպութեան շնորհիւ կրնայ հետեւեալ ընդհանուր մտածելին (Schema) համեմատ բաժնուիլ<sup>42</sup>. այսինքն՝

Վ Ե Ր Ի Ն - Դ Ե Ի Ո Ն Ս

Գօտի վերնէջլեան Պարուրաքերի (Spirifer Verneuili Murch.) կարմիր, թանձրաշերտ կիրեր՝ միջանկեալ մասնախառն խաւերով եւ կաւահարձաքարերով: Քարացածներն են՝ Պարուրաքեր Հարաւար (Spirifer Archiaci Murch.) Պարուրաքեր վրանայե- (Sp. tenticulum Sow.) Կարուրաքեր (Վերնուրաքեր) Երասխայի (Rhynchonella [Wilsonia] cuboides Sow.) Գարուրաքեր հինգանկան (Acervularia pentagona M.-E.), Բելլերոֆոն վերայե (Bellerophon Verae Frech.).

Մ Ի Զ Ի Ն - Դ Ե Ի Ո Ն Ս

- 3. Բուստերու կիր, ուր չափազանց շատ կը գտնուի Սիսապերե- Կարուրաքեր (Cyathophyllum quadrigeminum Goldf.).
- 2. Բազկոտանց կիր, ուր կը գտնուին Պարուրաքեր Կարուրաքեր (Spirifer inflatus Schnur.), Պարուրաքեր միջանկան (Sp. mediotextus Arch. եւ Vern.) Կարուրաքեր վրանայե (Rhynchonella letiensis Goss.) Կարուրաքեր (Chonetes.) հմմտ. Բրեչեյե Շնուրի (Bretzii Schnur).
- 1. Կօշկակի աստիճան: Մասնախառն կիրեր, ուր կը գտնուին Կօշկակի (Մոյկի-Կօշկակի) Կարուրաքեր (Calceola sandalina L.) Սիսապերե- Կարուրաքեր, տարբերակով՝ Կարուրաքեր (Cyathophyllum vermiculare Gf., mut. praecursor Frech.) Սիսապերե- Կարուրաքեր (C. caespitosum Gf.) Կարուրաքեր (Cystiphyllum vesiculosum Gr.) Կարուրաքեր Գոլդֆուսի (Favosites Goldfussi M. E. եւ H.) Արեւաքերի ծախարիկ (Heliolites porosus Schl.), Արեւաքերի կենդանաքեր (Stromatopora concentrica Gf.) Արեւաքերի (Atrypa reticularis L.) Բարուրաքեր (Merista plebeja Sow.) Հինգանկան Սիսապերե (Pentamerus Sieberi v. Buch.):

Ա Ծ Ո Ւ Ն Ս

6. — Ածխոյ կրաքարերը համադիր նստած են դեռնականաց վրայ, որոնցմէ կը զանազանուին միայն ընդհանուր տարածուած՝ բայց դոյզն չափով կարալեց պարունակութեամբ եւ նաեւ անով որ տեղ տեղ պաղլեղ երեւան կու գայ: Ածուխն ալ այն շրջաններու մէջ կը գտնուի՝ ուր կը գտնուէր Դեռնը, բայց նաեւ այս վերջնոյս շրջանակէն աւելի անդին կանցնի՝ մանաւանդ իւր վերին խաւերուն մէջ, այսպէս՝ օրինակի համար Երասխայ հարաւակողմը<sup>8</sup>, եւ Ուրմիոյ լճին կղզիներուն եւ ափանց վրայ<sup>11, 75</sup>: Հայաստանի մէջ խաւանատութեան ընդհատութիւն մը տեղի ունեցած է վերին-Ածխոյ շրջանի երկրորդ կիսուն: Ածխոյ ընդհանուր խաւկարգը հետեւեալն է<sup>10, 42, 63</sup>.

Վ Ե Ր Ի Ն - Ա Ծ Ո Ւ Ն Ս

Մոսկուայի աստիճան. Գօտի Իլիկի (Fusulina). Մութ-գորշ, երբեմն դոլոմիտական կիր, ուր կը գտնուին Իլիկի Կարուրաքեր (Fusulinella sphaeroidea Möller). Իլիկի Կարուրաքեր (F. lenticularis Douv.) Կարուրաքեր (Nodosaria radicata L.) Կարուրաքեր Բոմանի (Endothyra Bowmani Phill.) Կարուրաքեր (Bryozoen), Կարուրաքեր (Kalkage) եւ Բելլերոֆոն հմմտ. Կարուրաքեր (striatus):

Ն Ե Ր Զ Ի Ն - Ա Ծ Ո Ւ Ն Ս

Գօտի՝ Նսկայական Ուոսակի (Productus giganteus). Թանձրախաւ, կարախառն բուստերու-կիրեր, ուր կը գտնուին Սիսապերե- Մարտի (Cyathophyllum Murchisoni M. E. եւ H.) Սիսապերե- Մարտի (Lithostrotion Martini M. E.) Կարուրաքեր ծախարիկ (Lonsdaleia floriformis M. E. եւ H.) Զափրեյի Կարուրաքեր (Zaphrentis cylindrica M' Coy.) Ուոսակի Կարուրաքեր (Productus giganteus Mart.), Ուոսակի Կարուրաքեր (P. semireticulatus Mart.) Պարուրաքեր Կարուրաքեր (Stromatopora concentrica Gf.) Արեւաքերի (Atrypa reticularis L.) Բարուրաքեր (Merista plebeja Sow.) Հինգանկան Սիսապերե (Pentamerus Sieberi v. Buch.):

Կեռն (Spirifer striatus Sow.) Գրեյնգեր (Spirigera planosulcata D'Orb.) Բեյլանգուս (Euomphalus pentangulatus Sow.):

Գոտի ճոռնակեան Պարուրաբերի (Spirifer tornacensis). Մառնախառն կրաքարեր, մառն եւ հերձաքար.

Ա. Շուշանակերպաց-կիր (Crinoidenkalk), ուր կը գտնուին՝ Լայնաշուշան (Platycrinus), Դալմանելա Միչելինի (Dalmanella Michelini L'Ev.) Ուրտոթետ Կրենիստրիա (Orthothes crenistria M'Cosv.) Բոնետի Կոնետես Կարենսիս (Chonetes hardensis Phill.) Գրեյնգիթիդես Լոնգիսեպս (Griffithides longiceps).

Բ. Բազիպոտանց (Brachiopoden) խաւեր, ուր կը գտնուին՝ Ուրտոթետ Կրենիստրիա (Productus perlongus Pand., տարբերակ՝ Ուրտոթետ Կրենիստրիա P. armeniaca Frech.) Աթիրիս Ամբիգուա (Athyris ambigua Sow.) Գրեյնգերի Կրենիստրիա (Spirifer tenticulum Sow.):

Պ Ե Ր Մ Ե Ա Ն - Ե Ռ Ե Ա Կ

(Պ Ե Ր Մ Ո Յ - Տ Ր Ի Ա Ս)

7. — Երասխայ ավեր գտնուող Զուրայի եւ զրացի քեասան-եայլա գաւառի Պերմիան-Տրիասական կիրքերը մթերուած են ծովախորշի մը մէջ այն ծովուն՝ որ մինչեւ հնդկական Սալտ-Ռանջ (Salt-Range) կը տարածուէր: Հակառակ միջին Երասխայ շրջանակի հնակենդանական ծալքերու գոտեյն, որոնց մէջ համաժամանակեայ ժայթքաքարեր կը պակսին, այս կրտսերագոյն խաւերն՝ ըստ Frechի<sup>42</sup> կը ցուցնեն միայն ծռուածքներ՝ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ սեպ անկուածքներով եւ անցիկի ու որձածիրանաքարի (Quarzporphyr) բազմաթիւ նիստ-երակներով: Բայց ըստ Bonnetի<sup>30</sup> Ածուխը, Պերմիան ու Եռեակնի (Տրիաս) համադիր ըլլան եւ ի միասին ծալուած: Հայաստանի մէջ ուրիշ տեղեր Տրիաս տակաւին չէ ծանօթացած: Կարելի է սակայն թէ Զերու-լեռան (Զարի աւազանին մէջ) զոլովաններն այս կազմութեան վերաբերին, արեւմտեան Կաւկասի սրիասական զոլովաններու նման: Հռե-

ղականը՝ (Rhät) բոյսերու մնացորդներով կը գտնուի միայն Հայաստանի արեւելեան սահմանը կամ հիւսիսային Պարսկաստանի Ալեքսրս շղթային մէջ:

Զուրայի խաւերը հետեւեալ դասաւորումը կը ցուցնեն<sup>1, 30, 42</sup>:

Ն Ե Ր Ի Ն Տ Ր Ի Ա Ս

Նեղրամի որձաքարակ (Quarzit von Negram) որուն մէջ միջանկեալ նստած է ալէկերպ կիր (Wellenkalk), ուր կը գտնուին վէրֆէնեան (Werfen) քարացածներս՝ Կելտիտ-Վիմուսի համա. Կելտիտ (Pseudomonotis cf. Clarai Bronn.) Տիւրոլիտ (Tirolites): Այս հորիզոնը Bonnet կը համեմատէ հնդկական Միջին-Տրիասի Ելեթիտ (Ceratites subrobustus) խաւերուն հետ:

Կարմիր կիր, ուր՝ ըստ Բոննէի գիւտին՝ վերը կը գտնուի Գանուսի համա. Ելեթիտ (Danubites cf. nivalis Diener) եւ վարը՝ Կելտիտ (Celtites dimorphus Waag), Կելտիտ արմատաւոր (C. armatus Waag), եւ Կելտիտ սրտաւոր (C. acuteplicatus Waag). Ասոնք Սալտ-Ռանջի վերին Եղջերեայից-կրաքարերու ձեւերն են:

Վ Ե Ր Ի Ն Պ Ե Ր Մ

Վերին Սերտաքար (Zechstein, Զիդերուի սասիման):

Գորշ մառն եւ թիթեղակերպ կիր (Plattenkalk), ալէձեւ կրի նման, ուր կը գտնուին Խուրուի Գուրի (Lima Footei Waag.) Բուրբուի համա. (Lithodoma abbreviata Waag.) Կիւրուտոմարիա (Pleurotomaria cf. punjabica Waag.):

Սերքին Սերտաքար (Զուրայեան Ունկեղջերեայի սասիման (Otoceras djulfense):

Թանձրաշերտ մառնախառն կիր, որուն մէջ կը գտնուի 8—10 մետր թանձրութեամբ գոտի մը՝ Եղջերեայից եւ Բազիպոտանց ճոխ կենդանախմբով (Fauna). այսպէս՝ Փարթիս Աբիչի (Amplexus Abichi Waagen եւ Wentzel). Խուրուի Երեյիտ (Favosites Jabiensis Waag. եւ Wentz.) Սիւսուրուի վերջուտ (Cyathocrinus virgalensis Waag.) Ուրտոթետ (Productus intermedius Abich.) Ելեթիտ Գլուս (Mar-

ginifera spinosocostata Abich.) Գրեյնգեր (Spirigera protea). (— վերջին երեքս՝ բազմաթիւ տարբերակներով —) Գալմանելա Ինդիկա (Dalmanella indica Waag.) Մեքուրուի Կուրուի (Macrocheilus avellanoides Kon.) Ուրտոթետ Կրենիստրիա (Orthoceras annulatum, տարբերակ՝ crassum Foord.) Նեյթիտ (Nautilus cornutus Golov.) Կելտիտ (Pleuronautilus aff. Wynnei Waag.) Փարթիս Աբիչի (Gastrioceras Abichianum Möller.) Հունգարիտ (Hungarites Raddei Arth.) Ուրտոթետ Կրենիստրիա (Otoceras djulfense Abich.) Ուրտոթետ Կրենիստրիա (տրոպիտ, O. tropitum Abich.):

Bonnet<sup>30</sup> կ'ըսէ թէ այս կրաքարերու մէջ չորս հորիզոններ կան (առանց սակայն իւր պնդածն ապացուցանելու) եւ թէ ասոնց վերնագոյնը կ'որոշուի անով որ հոն կը գտնուի Ուրտոթետ (Otoceras)՝ առանց Ուրտոթետ (Productus) ընկերակցութեան:

Քիչ մ'աւելի հիւսիս, Սուբուս լեռան մէջ (բասանեայլա) ալ Bonnet<sup>31</sup> Տրիաս գտած է: Այս տեղ Տրիասը կը պարունակէ Խուրուի (Ammoniten)՝ Հիմալայայի Ներքին-Տրիասի Meekocerasի խմբէն, եւ քարացածներէ զուրկ կրաքարերով կը բաժնուի Ածուխը (Fusulinella-Kalk): Ամբողջ խաւակարգը (ի միասին առած նաեւ Բայոյականը՝ Bajocien) համադիր է, դէպ ի հիւսիս-արեւելք կ'իջնէ եւ իբր 2000 մետր ծովէն վեր բարձրութեան վրայ տապալած ծալքի մը հակառակ դարձած սրունքը կը կազմէ:

Յ Ո Ւ Ր Ա

Լ Ի Ա Ս (Lias)

8. — Լիասեան ժամանակէ քարեր Հայաստանի մէջ մինչեւ հիմայ տակաւին չեն ծանօթացած: Միայն Ուրմիոյ աւազանին մէջ, որ արդէն սահմանէն դուրս կ'իջնայ, գտնուած է Տոյարկեանը (Toarcien)<sup>106</sup>: Կենդանական Ելեթիտ այս խառնուրդը՝ որ հոս կը գտնուի, կը մեկնուի ծովային կապակցութեամբ մը՝ Ռումանիոյ եւ Տրանսիլուանիոյ վրայէն՝ Հունդուրական ծո-

վուն հետ<sup>81</sup>: Ատրպատականի Լիասական կրաքարերը բաց ծով մը մասնանիշ կ'ընեն իբր կենդանական Կաւկասի Փլիշանման (Flysch.) ծովափնեայ երեսահարթ (Facies): Կարելի է թէ ասոնք յառաջագոյն կապակցութիւն ունեցած ըլլան Անկիւրիոյ մտաբերակութաշի խորածովային սկիսաւերուն հետ: Միջին օղակ կազմող անդամները կամ արդէն լերկացած են եւ կամ տակաւին պիտի գտնուին, թերեւս Տարսիմի հողամասին մէջ: Արդեամբք ալ Pombeckj<sup>81</sup>, այն կարծիքը յայտնած է թէ Գառնաւիգի (Gernavig) եւ Կամասքէտի (Ուրմիոյ լճին հիւսիսակողմը) ածուխը թերեւս լիասական ըլլայ: Բայց ցայժմ ծանօթ տեղեկութիւններն այս կարծեաց հակառակ կ'երեւան: (Հմտ. ներքին Այգարդեակ, § 15):

Դ Ո Գ Գ Ի Ր

(Dogger)

9. — ԲԱՅՈՅ (Bayeux) ԱՍՏԻՃԱՆ: — Բայոյի ժամանակ եւ յաջորդ դարաշրջաններուն մեծագոյն մասին ատեն հրաբխային նշանաւոր գործունէութիւն մը սկսած է արդի արեւելեան եզրալեռանց հողաբաժնին մէջ: Յաճախադէպ, մասամբ ընդծովեայ հրաշնութիւնները փնտրած են կենդանիներու կենաց այնչափ որ հազիւ ցանցառ հետքեր կը գտնուին անմաքուր կրաքարի աղտերուն մէջ, որոնք փխարներու եւ աւազաքարերու եւ հրափրիոյ ծածկոյթներու մեծանիստ խաւերուն միջեւ խառնուած են:

Քարակարգի վարի մասը կը կազմեն կանաչագոյն աւազաքարեր, որոնց մէջ միջանկեալ խառնուած են հոսանքներ սեւակճի եւ խարսխային անդէսաքարի (Andesit) անոնց փխարներով միասին եւ տեղ տեղ երեւան եկող գորշածխոյ (փայտաքարի, Lignit) աղտերով: Այս շարքը կը տարածուի ընդհատումներով՝ Կենդանական Կովկասէ սկսեալ (Կուրիլայ աւազանը<sup>41</sup>) Լիւվար-լեռան<sup>82</sup> եւ արեւելեան եզրալեռանց վրայէն (Բոյանի հովիտը՝ Գան-



Հայաստանի անցիկներու եւ սեւածիրանա-  
քարերու մեծագոյն մասին ժայթքումը:

Կիմմերիջ (Kimmeridge) ծանօթ  
է Ղարաբաղի շրջանակէն: Հոն նոյն երեւ-  
ան կու գայ սպունդի եւ բուստի Նատթե-  
հայմեան (Nattheim) երեսահարքով: Իրեն  
խարխիւր կը կազմէ քարազանգ մը, որ  
մատնանիշ կ'ընէ թէ միջին Կիմմերի-  
ջեանի ատեն (Ճովային) Անդրխաղացու-  
թիւն մը (Transgression) տեղի ունեցած է:

Արեւմտեան Ղարաբաղի մէջ Ողջի եւ Բա-  
զար գետերուն աւազանին միջեւ, օրինակի հա-  
մար տեղերս՝ Կաւարտ, Շայբլի, Սէմի եւ Սերին  
ձորերը եւ Տաթեւի մօտերը<sup>10, 97</sup>, Կիմմերիջեանի  
ներկայացուցիչն է կարմիրկեկ, մարմորաման  
կրաքար մը, որուն մէջ կը գտնուին քարա-  
ցածներս՝ Գլանայրոյնի Կլանայրոյնի (Cylindro-  
phyma milleporatum Goldf. sp.) Ծաւոն-  
իանի ցանցաւոր (Tremadictyon reticulatum  
Gf. sp.) Հիւսիսեւ Կլանայրոյնի (Craticularia  
clathrata Gf. sp.) Պարզի Գլանայրոյնի (Eudea  
perforata Quenst.) Արեւմտեանի Գլանայրոյնի  
(Pentacrinus cingulatus Münst.) Խոն-  
րոյ Կլանայրոյնի (Cidaris coronata Gf.) Կրոն-  
այրոյնի (Rhynchonella lacunosa Schloth.)  
Այս Կիմմերիջեանին վրայ նստած է փխրածին  
(Tuffogen) աւազաքարերու մեծանիստ կարգ  
մը, իսկ ասոնց վրայ ալ ծածկոյթ մը կը կազմէ  
Տուրոնեան կիրը:

Արեւելեան Ղարաբաղի մէջ Հուշի արեւ-  
ելակողմը, ի Փիրջամալ, Կրզկալէսի եւ Գա-  
գրաս կը գտնուի ձուաքարային (oolithisch)  
բուստակիր: Ասի ունի քարացածներս՝ Լատիմա-  
անդրիան (Latimaeandra lotharinga Mich.)  
Սլանայրոյնի (Stylina limbata Gf.) Հուշի  
Կրոնայրոյնի (Actinaraea granulata Münst.)  
Չեմաթայրոյնի (Reptomulticava cap-  
pilliformis Mich.) Տանայրոյնի (Apio-  
crinus rosaceus Schloth.) Լանայրոյնի (Pinni-  
gena, թեւծակաւոր):

Խաչենոյ եւ Խոջալի գետոց միջեւ (Հուշի  
հիւսիսակողմը) եղբրաքարեր (Hornstein) պա-  
րունակող կիր մը կը ներկայացընէ Նատթե-  
հայմեան սպնդային երեսահարքը<sup>14</sup>: Ասի ունի  
քարացածներս՝ Կոնայրոյնի Կոնայրոյնի (Cnemi-  
diastrum tuberosum Zitt.) Համայրոյնի Բազմա-  
նայրոյնի (Isastraea confluens Gf.) Սլանայրոյնի

Կոնայրոյնի (Stylina cf. tubulosa Gf.): Այս  
կիրը նստած է շատ հեռուներն ալ տարածուած  
քարազանգի (Konglomerat) մը վրայ, որ նաեւ  
Հուշի քով երեւան կու գայ, իսկ միւս կող-  
մանէ՝ քաղաքին հարաւարեւելեան կողմը՝ իբր  
ներքնախաւ է բազկոտանց-կրի մը, որ Կիմմե-  
րիջի ժամանակէն է եւ որ ունի քարացածներս՝  
Կրոնայրոյնի Կրոնայրոյնի (Rhynchonella inconstans  
Sow.) Հուշի Կրոնայրոյնի (Terebratula sub-  
sella Leym.) Ցուլայրոյնի (Zeilleria  
pentagonalis Br.) եւ Ծաւոնայրոյնի (Phygmatia  
Mandelslohi): Ճիշդ միեւնոյն հո-  
րիզոնը կը գտնուի Արեւմտեան-Ղարաբաղի  
մէջ՝ Վանք-Լեռնոյ վրայ, Չայսիմի գետոյն հա-  
րաւակողմը<sup>97</sup>:

Տիթոն (Tithon) ծանօթ է միայն Արեւ-  
մտեան-Ղարաբաղէ, այն է՝ Կիսկի լեռ<sup>97</sup> եւ Տրա-  
պասար-Լեռ (Թափասար, Տաթեւի հարաւակող-  
մը<sup>1, 10</sup>) եւ այն բուստակիրերու ձեւով, որոնք ունին  
քարացածներս՝ Սլանայրոյնի Կոնայրոյնի (Styli-  
na decemradiata Quenst.) Եւրոպայի Կոնայրոյնի  
(Calamophyllia pseudostylina M.E.)  
Երկուշի (Diceras Escheri de Lor.)  
Նայի Ստրամբերգեանի (Nerinea strambergensis  
Peters.) Նայի Վոլշի (Nerinea Voltzii d'Orb.)  
— եւ ուրիշ քարացածներ Շտրամբերգեանի  
(Stramberg) երեսահարքով: Հոս ասոր վրայ  
նստած է Ուրգոնեանը (Urgon): Ամենէն մեր-  
ձաւոր նման Տիթոնեան խաւը կը գտնուի Կեն-  
դրոնական Կաւարտի հիւսիսային երեսի վրայ:  
Հոն նոյնը տակաւ կ'անցնի Նորահողեանի  
(Neokom.):

Պուրբէքի (Purbeck) անուշ ջրոյ մասն՝  
քարացածներովս Խաչենի Խաչենեան (Val-  
vata helicoides Forbes.) Տիթոնի (Հուշի-  
ձի) Կոնայրոյնի (Planorbis Coquandianus  
de Lor.) Խաչենի (Helix), անկերու մնացորդ-  
ներ եւ ածուխ կը գտնուին Գուլի մօտերը՝  
Մեղրի (Migri) ձորին մէջ (Արեւմտեան Ղա-  
րաբաղ<sup>97</sup>): Կոնայրոյնի (Konschin) այս խաւը  
սխալմամբ իբր Նուալարդեանի (Miozän) հոչա-  
կած է:

(Շարունակելի:)



է. Յ. Տ.

Միհրդատի Գ. Պոնտոսի Կրոնայրոյնի  
Ներք Գիտի Պոնտոս Եւ Հեռուստ

Բ. Պոնտոսի արշաւանքները:

Ի վերջոյ, կարգապահութիւնը թէեւ  
վերահաստատուեցաւ հոռոմէական բանակին  
մէջ, սակայն լուծուեցան լուկուլլեան բա-  
նակին ա'յն զօրագունդերը, զորոնք Գլա-  
բրիոյ նախապէս արձակած էր: Պոնտոս  
երեք լեզէոն զինուորով խաղաց Կիլիկիայի  
դէպի միջին Ալիս: Անոր երեւումը ստի-  
պեց զլուկուլլոս վերջնականապէս թողուլ  
հրամանատարութիւնն ու հեռանալ Ասիայի:  
Վերջնոյս կողմէ արձակուած զինուորներէն  
ա'յնքան մեծ բազմութիւն մը դարձեալ  
եկաւ հոռոմէական արձուկնչան դրօշին  
ծառայելու, որ Պոնտոս կարող եղաւ սուղ  
ժամանակի մը մէջ իր զօրաց թիւը 60.000ի  
բարձրացուցած՝ իսկոյն 66ի արշաւանքին  
սկսիլ Միհրդատի դէմ, որուն նոյն միջո-  
ցին իր տրամադրութեան ներքեւ ունեցած  
զօրաց թիւը հոռոմայեցոց ունեցածին հա-  
զիւ թէ կէսին կը հասնէր:

Ահա այս արշաւանքին տեղւոյն եւ անոր  
երկրագրական դիրքերուն է որ ես անձնա-  
պէս քաջածանօթ եմ:

Միհրդատ որոշիչ ճակատ տալէ խու-  
ստիեցաւ, ու միեւնոյն ատեն պոնտական  
երկիրն աւերեց: Հոռոմէական բանակը պա-  
րենաւորելու հարցը դարձեալ գործողու-  
թեանց առանցքը կազմեց: Քանզուած Պոն-  
տոսն ի վիճակի չէր բնականաբար հոռոմէ-  
ական բանակին պէտք եղած պարէնը հայ-  
թայթել. հետեւաբար ստիպուեցան Հոռ-  
մայեցիք դարձեալ Կապադովկիայի զայն  
փոխադրել, զոնէ սկիզբները, մինչեւ որ  
Պոնտոս որոշում տուաւ Փոքր Հայքը գրա-  
ւել, որպէս զի անոր անբաւ մթերքէն օգ-  
տուել կարենար:

Միհրդատ լերան մը վրայ ամրացած՝  
իր այրուձիուն միջոցաւ խափանել ջանաց  
հոռոմէական բանակին պարենատար զօրա-  
խումբերը: Չարկաւ Պոնտոս պոնտական  
այս այրուձին, եւ այսու առաջն առաւ այն  
մեծ վտանգին, որ իր պարենապահ գունդին  
կը սպառնար: Միհրդատ իր դիրքերը ջրոյ  
պակասութեան պատճառով ստիպուեցաւ  
լքել, եւ բանակովը քաշուեցաւ կիրճերով  
հարուստ միջավայր մը, ուր Գաստիրայի  
(Բիւրք) քով, Սուլեհի մօտերը գտնուող  
դիրք մը գրաւեց:

Ես այս Գաստիրա անունը, Ռայնախի  
հետ, յետագայ Նիկոպոլսոյ (Բիւրք) տեղը  
կը միտիմ որոնել: Կապանաշատ այդ լեռ-  
նաշղթան, որուն վրայէն խոյս տուաւ  
Միհրդատ, հաւանաբար Չարայի ու Սուլե-  
հիի միջեւ գտնուող Կարաբայրի կիրճերն  
են: Հնար է թէ Միհրդատի նախորդ դիրքը՝  
Չարայի կողմերը, թերեւս ալ քաղաքին ա-  
րեւմտակողմը գտնուող լեռներու վրայ  
եղած ըլլայ: Միհրդատ՝ Կարաբայրի  
վրայով, Չարայի նահանջելովը, բացած  
եղաւ Հոռոմայեցոց առջեւ Ալիսի աղբերակ-  
ներու վրայէն դէպ արեւելք՝ Փոքր Հայք  
առաջնորդող ճամբան, որ ներկայիս եւս  
գոյութիւն ունի, թէեւ հարկ է ըսել, չափա-  
զանց դժուարակիս:

Սերաստիոյ դաշտապետին կը վերջա-  
նայ քաղաքէն սակաւիկ մը դէպ արեւելք:  
Գետածորը մինչեւ Չարա այնպիսի դիրք  
մ'ունի, որ հեծելագունդ մը կարող է հոն  
արձակերասան ու արշաւատոյր երկվարել:  
Չարայի անդին՝ հիւսիսային, արեւելեան  
ու հարաւային ուղղութեամբ դժուարասեպ  
լեռներ կը բարձրանան: Արդ, պոնտական  
հեծելագորի շարժումներուն շատ յարմար  
եւ ճիւղարուն դետին մը կը ներկայացնէր  
այս դիրքն, որ Չարայի ու Սերաստիոյ  
միջեւ կը տարածուի: Եթէ Միհրդատ իսկա-  
պէս Չարայի արեւմտակողման բարձունք-  
ներուն վրայ բանակած նստած էր՝ փակած  
կ'ըլլար անշուշտ դէպի Փոքր Հայք առաջ-  
նորդող ճամբան: Այս կողմի բարձունքը  
կազմուած են արտասովոր ողորկութեամբ  
ժայռազետնէ մը, զոր ես անթափանց կը  
գտնեմ: Հետեւաբար անհնար չէ մտածել,  
որ պոնտական հեծելագորին այս պարտու-  
թենէն յետոյ՝ բանակին ջուրն այլ եւս կա-  
րելի եղած չըլլարով ձորամիջի լճերէ ու դե-  
տերէ հոգացուել, սոյն տազնապը ծայր  
տուած ըլլայ:

Բիւրք կը գտնուի Սուլեհիի դաշտին  
վրայ: Ասոր ու Գայլ գետի (Բէլքիտ) միջեւ  
կը բարձրանայ գրեթէ կղզիացած լեռնա-  
զանգուած մը, որուն վրայ՝ — հետեւաբար  
հիւսիսակողմը Բիւրքի, — ես կը կարծեմ  
թէ պէտք է որոնել բանակետող Միհրդ-  
ատի: Հնար է թէ ա'յս բարձունքը  
Գաստիրայի կոչուէր, որ անունն այլ եւ  
այլ հին աղբիւրներու մէջ եւս յիշատա-  
կուած կը գտնենք<sup>7</sup>:

<sup>7</sup> W. Fabricius, Theophanes von Mytilene, 1880, S. 112ff.

